

Գրութեարմեն բալոր յնւկրների, սիացե՛մ.

Դ. Բ. Բերդ

ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐՁԱՆՆԵՐՈՒՄ

633.1

F-55

1930

Պ-ՊՍՍՈՎՀ. Դ-ՊՆ-Բ-Վ-Հ-Ր-Ա-Ց-Ր-Ա

24 SEP 2010

63.31

P-55

„ՄՈՒՐԱՄԱՆՈՂ“ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ № 19

ЦЕНТР. ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА ТССР

MNH. No. 530

2

31033.1

ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Культура кукурузы в нацобластих.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ԹԱՐԴՄ. Հ. Ա.



ԱԶԳԱՅԻՆ ՓՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՍՏԱՎՅԻՆ ԿՈՎ-
ԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՏՈՎ Դ-Վ.
1930

18661

04.03.2013

Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

Յեղիպտացորենը բնակչության համար պարեն է, անասունների համար—կեր, իսկ արդյունաբերության համար—հումույթ։ Յեղիպտացորենը մի յերաշխիք է հացարույների պակաս բերքի գեպքում։ Յեղիպտացորենն արտածվող ապրանք է։

Մեր ՀՀ Կովկասյան յերկրամասում նա մեծ տարածություն է բռնում (1929 թվականին յեղել է 1 միլիոն 243 հազար հեկտար, իսկ այս տարի կիմնի 1 միլիոն 794 հազար հեկտար)։ Սակայն այս դես ևս շատ անբավարար է, համեմատած մեր ամբողջ ժողովրդական տնտեսության պահանջների և այն հնարավորությունների հետ, վորոնք տալիս է յեղիպտացորենի մշակությունը։

Յեղիպտացորենի ուղիղ մշակույթի գեպքում մի հեկտարից կարելի յետ ստանալ մինչև 500 փութ հացահատիկ և մինչև 2 հազար փութ կանաչ զանգված (зеленая масса)։

Ավելացնելով յեղիպտացորենի ցանքի տարածությունը, բարելավելով նրա մշակումն ու խնամքը, կարելի կիմնի ասել, վոր մենք կլուծենք մեր անասուններին կերով ապահովելու խնդիրը։ Լավ կազմակերպված, մեքենայացված տնտեսության մեջ յեղիպտացորենը, ավելանալով ցորենի վրա, խնայողություն կտա, շատ ու շատ տոկոսներով կկրծատի ցորենի ծախսումը պարենավորման համար։ Վերջապես, յեղիպտացորենը սոյայի հետ մեկտեղ հանդիպանում է մյուս բոլոր հացահատիկային կուլտուրաների համար ամենալավ նախորդը։

Հյուսիսային կովկասի ազգային շրջաններում յեղիպտացորենն ամենազլիսավոր գաշտաբուծական կուլտուրան է։ Անցյալ տարի ազգային շրջաններում յեղիպտացորենի ցանքերի



Կ 3148-63

տարածությունը կազմում էր 300 հազար հեկտար, իսկ այս տարի այդ տարածությունն զգալի չափով պիտի լայնացվի:

Անհատական, կոտորակված գյուղացիական տնտեսությունը չեր կարող ուղիղ կերպով ինսամել յեզիպտացորենին, չեր կարող ոգտագործել վոչ միայն նորագույն, կատարելագործված մեքենաները, այլ ընդհակառակը, նույնիսկ չեր կարող լրիվ բեռնվածությամբ ոգտագործել արտադրության այն չնչին միջոցները, վարոնք գոյություն ունեյին: Ուստի և զարմանալի չե, վոր ազգային շրջաններում յեզիպտացորենը տալիս եր չափազանց ցածր, ուղղակի չնչին բերք: Մի քանի շրջաններում նա աշխատավոր գյուղացիությանը վոչ միայն չեր բերում յեկամուտ, այլ և տարեցտարի վնասներ եր տալիս:

Աշխատավոր գյուղացիք—լեռնեցիները միայն կրվողներում համախմբվելով կարող են ոգուտով աշխատել թե իրենց և թե մեր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության համար: Միայն կովողում կարելի յե տնտեսությունը վարել ուղիղ, գիտականապես և սպանային կերպով: Ուղիղ և հմուտ մշակելով, յեզիպտացորենը կտա չտեսնված բերք և յեկամուտ, աշխատավոր լեռնեցիներին դուրս կբերի նյութական և կուլտուրական ազատագրման ճանապարհը: Կոլեկտիվացումը վերջին հարվածը կհասցնի բարակության, չքաղորության և միջակների դարավոր թշնամուն—կուլտակին:

Ըսկ. Բերգի այս գրքույկը սովորեցնում է, թե ի՞նչպես պիտի մշակել յեզիպտացորենն ազգային շրջաններում, ի՞նչպես անել վոր նրանից բարձր բերք ստանալ:

Հյուսիսային կովկասի ազգային շրջանները, վորտեղ յեզիպտացորենը հանդիսանում է գլխավոր կուլտուրա—պետք է առաջին հերթին հաջողեցնեն նրա բերքի բարձրացումը:

Սրա համար հիմք են ծառայում համատարած կոլեկտիվացումն ու մեքենաները:

Ն. ԹՈՒՐԵՆԿՈ

ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԸ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՒԼՏՈՒՐԱ ՅԵ

Յեզիպտացորենը լայնորեն տարածված ե ազգային շրջաններում: Զեչնիայում, Ոսեթիայում և ինգուշեթիայում ցանքերի յուրաքանչուր 100 հեկտարից^{*}) 76 հեկտարը յեզիպտացորեն է, Հյուսիսային Ոսեթիայում—85 հեկտարը, ինգուշեթիայում—97 և միայն կաբարդայում յեզիպտացորենն ավելի սակավ նշանակություն ունի. այստեղ բոլոր ցանքերի ամեն մի 100 հեկտարից յեզիպտացորենը բռնում է միայն 64 հեկտար: Ոսեթիայում, ինգուշեթիայում և Զեչնիայում կան գյուղեր և ամբողջ ույոններ, վորտեղ բացի յեզիպտացորենից, փոչինչ չի ցանքում:

Յերեք խոշորագույն շրջաններում—չեչենական, հյուսիսաթիական և ինգուշական—յեզիպտացորենը վոչ միայն գերակշռում է գաշտերում, այլ և հանդիսանում է գլխավոր հացը, վորով կերակրվում է բնակչությունը: Կաբարդայում յեզիպտացորենով կերակրվում են կորեկի ու ցորենի հետ հավասար: Հնդիանրապես, այդ շրջաններում յեզիպտացորենի նշանակությունը շատ մեծ է և նրա վրա յե կառուցված ամբողջ տնտեսությունը: Նրանով կերակրվում է բնակչությունը, նա ծառայում և վորպես անստունների կեր և միենույն ժամանակ հանդիսանում է վորպես գլխավոր մթերք վաճառքի համար, այ-

^{*}) 1 հեկտարը հավասար է 0,9 դեսյատինի:

սինքն կազմում ե գյուղացիական տնտեսության յեկամուտների հիմնական աղբյուրը։ Ազգային շրջանների ժողովրդական տնտեսության համար յեղիպտացորենն անհրաժեշտ ե նաև վորպես հումուլթ՝ ոսլայագործական և գինեգործական գործարանների համար, վորոնց թիվն այնտեղ հասնում ե մինչև 10-ի։

1 միլիոն 243 հազար հեկտար յեղիպտացորենից, վորն անցյալ տարի կար մեզանում—Հյուսիսային Կովկասում—մոտ 300 հազար հեկտարն ընկնում ե ազգային շրջանների դաշտերին։ Այս պատճառով պարզ ե, վոր յեղիպտացորենի նույնիսկ շրջին անբերրիությունն իսկույն և յետ շատ ե անդրադառնում ազգային շրջանների տնտեսության վրա և մասամբ նույնիսկ Հյուսիսային Կովկասի ժողովրդական տնտեսության ընդհանուր կառուցվածքի վրա։ Ահա թե ինչու յեղիպտացորենի լավ բերք ստանալը շատ և շատ կարևոր ե մեր ամբողջ յերկրամասի համար։

ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՎԱՆԵՐՈՒՄ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ՑԱՌ Ե

Բազմամյա դիտողությունները ցույց են տալիս, վոր ազգային շրջաններում յեղիպտացորենի բերքատվությունը շատ ցածր ե։ Միջին հաշվով Ոսեթիայում մի հեկտարից հավաքվում է 20 և կես ցենտները^{*)} յեղիպտացորենի հացահատիկ, ինդուշեթիայում—15 և կես ցենտ., Չեխիայում—12 ցենտ. և կարգադայում ընդամենը միայն 11 ցենտներ։ Ազգային շրջանների համար այսպիսի բերքը չափազանց անբավարար ե, քանի վոր բնության պայմանները (կիման և հողը) յեղիպտացորենի համար այստեղ շատ լավ են։ Յեղիպտացորենի բերքատվության կողմից ազգային շրջանները սասատիկ յետ են մնում ոռուսական շրջաններից։ Ահա թվեր, վորոնք ցույց են տալիս յեղիպտացորենի բերքը ոռուսական և ազգային շրջաններում։

^{*)} Ցենտները հավասար ե 6 և մեկ տասերորդական փթի։

1 հեկտարից սացվող յեղիպտացորենի բերքը ցենտներով

ՌՈՒՍՈՒՄ	ՇՐՋԱՎԱՆԵՐՈՒՄ	ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՎԱՆԵՐՈՒՄ	ՔԱՆՔ ՑԵՆՏՆ
Արմավիրի	20 ^{1/2}	Հյուսիս. Ոսեթիա	20 ^{1/2}
Մայկոպի	16 ^{1/2}	Ինգուշեթիա	15 ^{1/2}
Կուբանի	16	Կարաչայ	12 ^{1/2}
Սունժենսկի	13	Չեչնիա	12
Տագանրոդի	13	Կաբարդա	11
Թերեքի	12		

Այս աղյուսակը ցույց ե տալիս, վոր միայն Ոսեթիան ունի այնպիսի բերք, ինչպես Արմավիրի շրջանը, իսկ մյուս ազգային շրջանների բերքը շատ ու շատ ցածր ե, քան ոռուսական շրջաններում։

Կուլտուրապես ուղիղ մշակվելու գեղիպտացորենը միջին թվով կտա մի հեկտարից 33—50 ցենտներ, իսկ տոսնձին դեպքերում նաև մինչ 100 ցենտներ։ Մեր յերկրամասում այդպիսի բարձր բերք ստանում են Ոսեթիայում ու Չեչնիայում գտնվող բոլոր փորձադաշտերն ու փորձնական հոգամասերը, իրենց դաշտերն ուղիղ մշակող մի քանի կոլխոզներ, ինչպես նաև լեռնեցիական գ.-տ. ինստիտուտը։ Այստեղից մենք տեսնում ենք, վոր ազգային շրջանների գյուղացիական տնտեսություններում բերքը շատ ցածր ե և նույնիսկ վնասարեր։ Այդ վնասը բոլորովին պարզ կյերևա, յեթե մենք յեղիպտացորենի դաշտերում գործադրված աշխատանքի արժեքը համեմատենք ստացված բերքի արժեքի հետ։ Հաշիվները ցույց են տալիս, վոր միջին հաշվով մեկ հեկտար յեղիպտացորենի վարելու, ցանելու, քաղանակելու և հավաքելու ամբողջ աշխատանքը նրանում ե 55 ոռուբի։ Յեթե յեղիպտացորենի հասկերի (պօշտակ) 1 ցենտներն արժե 3 ոռուբի և ցողունների 1 ցենտները—60 կոպեկ, ապա հասկերի և ցողունների ամբողջ բերքը վա-

ճառելիս մի հեկտարից գյուղացին կարող է ստանալ—Ոսեթիայում 91 սուբլի, Խնդուշեթիայում—62 սուբլի և Զեչնիայում—49 սուբլի։ Այստեղից յերևում ե, վոր յեզիպտացորենի 1 հեկտարից Ոսեթիայի գյուղացին ստանում է 36 սուբլի ողուտ, Խնդուշեթիայի գյուղացին—միայն 7 սուբլի, իսկ Զեչնիայի գյուղացու աշխատանքն այստեղի բերքով նույնիսկ չի հատուցվի։

ԲԵՐՔԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ԲԱՐԵԼԱՎԵԼ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Ամեն մեկին հասկանալի յե, վոր այսուհետև տնտեսությունն այսպես վարել չի կարելի։ Այդպիսի ցածր բերքատվությունը, վորը չնշին վարձատրություն է տալիս հողագործի աշխատանքի համար, անթույլատրելի յե թե իրենց, գյուղացիների և թե ամբողջ ժողովրդական տնտեսության շահերի տեսակետից։ Այդ դրությունից կա միայն մի յելք—պետք ե բարձրացնել յեզիպտացորենի բերքը։ Սակայն դրա համար անհրաժեշտ է գիտենալ, թե լեռնական գյուղացիների ստացած բերքն ինչո՞ւ յե այդպես ցածր։

Մի քանիսները կարծում են, թե ցածր բերքը կախումն ունի ազգային շրջանների կիմմայից և հողից։ Այդ ճիշտ չե։ Վորպեսզի ապացուցել, վոր կիմման և հողն այստեղ գործ չունեն, համեմատենք ոսեթիական և խնդուշական գյուղացիների վերջին 4 տարվա բերքը լեռնական գ.-տ. ինստիտուտի ստացած բերքի հետ։

Լեռնական ինստիտուտի դաշտերը գտնվում են նույն վայրերում և նույն կիմմայական պայմաններում, ինչ վոր գյուղացիական դաշտերը։ Սակայն ինստիտուտի դաշտերը 2 անգամ ավելի բերք են տալիս, քան ոսեթիական դաշտերը և 2 և կես անգամ ավելի, քան խնդուշական դաշտերը։

Ուրեմն պարզ ե, վոր ազգ. շրջանների ցածր բերքի պատճառները պիտի փնտրել մի այլ տեղ, քան հողում ու կիմմայում։

Ազգային շրջանների գյուղացիների ցանած յեզիպտացորենի վատ բերքի իսկական պատճառները կարելի յե սահմանել, յեթե համեմատենք գյուղացիական դաշտերում ցանվող յեզիպտացորենի ցանքն ու մշակումն առաջավոր կոլխոզների ու փորձնական կայանների դաշտերի հետ։ Այդ պատճառները շատ են և նրանցից զիսավորները հետեւյաններն են։

1) Յեզիպտացորեն ցանելու համար հողը վատ և ուշ վարելու։

2) Վատ հացահատիկը, վորը գյուղացիք ցանում են իրենց հողերում։

3) Վոչ ուղիղ և ուշ ցանքը։

4) Յեզիպտացորենի դաշտերի վատ ինամքն ու նրանց խիստ աղտեղվածությունը։

Ուրեմն բերքը բարձրացնելու համար անհրաժեշտ է նախ յեվ առաջ վերացնել այդ բոլոր բերությունները։ Պետք է լավ յեվ իր ժամանակին վար անել, դաշտերում ցանել լավ սերմացու, կատարել ուղիղ ցանք յեվ լավ խնամել յեզիպտացորենին։ Այս բոլորը կտա այն բերքը, վորը նիմա ստանում է լեռնական գ.-տ. ինսիտուտը։ Պետք է վենականապես դեն ըրպետել յեզիպտացորենի մշակման հին յեղանակներն յեվ անցնել նորերին, վորոնք մշակել են՝ ագրոնոմիական գիտությունը, առաջավոր կոլխոզներն ու լավագույն պրակտիկները։ Դրա համար մենք պետք ե նախապես ծանոթանանք իրեն, յեզիպտացորենի բույսի հետ և իմանանք, թե նա ինչպես ե կազմը-ված, ինչպես և ապրում և ինչ պահանջներ ունի դեպի հողն ու կիմման։ Միայն յեզիպտացորենի առանձնահատկությունները և նրան ինամելու կանոնները գիտենալուվ կարելի յե բարձրացնել ազգային շրջանների այդ արժեքավոր բույսի բերքը։

**Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԲՈՒՅԱԾԸ
ՅԵՎ Ի՞ՆՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՆԱ ՈՒՆԻ ԴԵՊԻ
ՀՈՂՆ ՈՒ ԿԼԻՄԱՆ**

Վորպեսզի ավելի լավ ուսումնասիրենք յեզիպտացորենի կազմվածքի առանձնահատկությունները, համեմատենք նրան ուրիշ դաշտային բույսերի հետ։

Մենք կտեսնենք, վոր յեգիպտացորենը մյուս հացաբույշ-սերից տարբերվում է իր արմատի, ցողունի, տերեների ու ծա-ղիկների կազմվածքով։ Յորենը, վարսակն ու կորեկն ունեն ա-վելի մասը ու բարակ արմատներ, վորոնի հողի մակերևույթին ավելի մոտիկ են տեղավորվում։ Իսկ յեգիպտացորենի արմատ-ները հաստ են, ամուր և ավելի խորն են մտնում հողի մեջ։ Ուրեմն յեգիպտացորենի համար պահանջվում է ավելի խո-րունկ վար, քան ցորենի, վարսակի ու կորեկի և ուրիշ ման-րարմատ բույսերի համար։

Յեգիպտացորենի ցողունն ու տերեները խոշոր են։ Ցողու-նը շատ բարձր է, մարդուս հասակից ավելի բարձր, իսկ տե-րեները ցողունից լայնորեն փռվում են բոլոր կողմերը։ Այդ առանձնահատկության հետևանքով, յեգիպտացորենի բույսերը դաշտում պիտի կանգնած լինեն աղատ, վորպեսզի չսալիքեն մեկմեկու։ Անհրաժեշտ է, վորպեսզի արեկ ճառապայթները իւաշափ լուսավորեն յեգիպտացորենի ցողունի վրա յեղած ա-ւմեն մի առանձին տերերը։ Ուստի և յեգիպտացորենը պիտի ցանել նոսր և ուղիղ շարքերով։ Միայն այս գեղքում նա բարձր բերք կտա։

Յեգիպտացորենի հատիկն իր սաղմում պարունակում է շատ ճարպային նյութեր (յուղ)։ Այս պատճառով յեգիպտա-ցորենը չի կարելի ցանել ցուրտ յեղանակի դեպքում, քանի վոր սառը նողում ճարպային նյութերն սկսում են փչանալ, իսկ նրանց հետ փչանում է նաև սաղմը և յեգիպտացորենի հատիկը կորցնում է ծերու ընդունակությունը։ Գարնանացան գարին, որինակ, կարելի յեցանել շատ վաղ, յերբ հողը դեռ նոր և թեթև չափով տաքացել։ Իսկ յեգիպտացորենը պետք է ցանել ավելի ուշ, յերբ հողն արդեն լավ տաքացած է լինում։ Ու-րեմն յեգիպտացորենի հատիկի կազմվածքի առանձնահատկու-թյունից ել բղիում է նրա—յեգիպտացորենի մշակման վորոշ պահանջը։

Յեգիպտացորենի ամեն մի բույսի վրա կա փունջ (ավել) և հասկ։ Փունջն իր փոշանօթներով իրենից ներկայացնում է արու ծաղիկներ, իսկ հասկը (վարսանդներով)՝ եղ ծաղիկներ։ Փունջը դուրս է գալիս առանձին փոշի—դեղին գույնի շատ

մանր հունդեր։ Ընկնելով հասկի մետաքսանման թելերի վրա, նրանք բեղմնավորում են պայտատեղը, վորից հետո սկսում են զարգանալ հատիկները։ Յեթե թելերի վրա փոշից փոշի չի ընկնում, առաջ հասկը մնում է դատարկ, առանց հատիկի։ Փո-շին դեպի հասկը տանում է քամին և ուրեմն, յեգիպտացորենի բեղմնավորումը կատարվում է քամու միջոցով։ Փոշերի ծաղկ-ման ժամանակ փոշին ամպերի պես գնում է ամբողջ դաշտով և թռչում է հեռու, մի քանի կիրովետը։ Յորենի և վարսակի պաղատեղերն իրենց փոշիով և վարսանդը գտնվում են մի հատ-կի ծաղկի մեջ և նրանց բեղմնավորումը կատարվում է ուղղա-կի մի ծաղկի մեջ։

Ամեն մի հողագործ—կոլեկտիվստ և անհատ հողագործ պետք է այս բոլորը լավ գիտենա, քանի վոր այստեղից են բղիում զանազան կուլտուրաներ ցանելու գործնական կանոն-ները։ Յեթե մենք իրար կողքի ցանենք ցորենի յերկու տեսակ, ապա նրանք իրենց բոլոր տեսակային հատկությունները մա-քուր և լիովին կպահեն, վորովհետև ցորենի փոշի ընկնելը տե-ղի յե ունենում մի ծաղկի վրա և մյուս բույսերի փոշին նրա վրա չի ընկնում։ Իսկ յեթե մենք իրար կողքի ցանենք յեգիպ-տացորենի յերկու տեսակի, ապա մյուս բույսերի փոշուց բեղ-մնավորվելու հետևանքով, տեսակների առանձնահատկություն-ները խառնվում են։ Դրա արդյունքն այն է լինում, վոր ար-դեն ցանքի առաջին տարուց հետո մաքուր տեսակներ չենք ունենա։ Յեգիպտացորենի ծաղկման և բեղմնավորման այդ ա-ռանձնահատկություններից ել բղիում է հետեյալ չափազանց կարնոր յեգրակացությունը։—յեգիպտացորենի յերկու տեսակ-ները չի կարելի իրար կողքի ցանել։

Այսպիսով, ուսումնասուրեկելով յեգիպտացորենային բույսի գլխավոր առանձնահատկությունները, մենք կարող ենք իմա-նալ, թե նա ինչ պահանջներ ունի դեպի հողը, կլիման և մը-շակման յեղանակները։ Այս պահանջներից ամենագլխավորները հետեյալներն են։

1) Յեգիպտացորենը չի կարող զարգանալ այնպիսի հողե-րում, վորտեղ հողային շերտերում գտնվող ջրերը մոտեցած են ինում յերկու մակերևույթին, քանի վոր յեգիպտացորենի ար-

մատները խորն էին մանում հողի մեջ: Ուրեմն ձորահովիտնեռում, վորտեղ կանգ է առնում ջուրը, վոչ մի դեպքում չի կարելի յեզիպտացորեն ցանել:

2) Յեզիպտացորենը չի կարելի ցանել սառը հողում, վորովիտև նրա հատիկն սկսում է աճել միայն այն ժամանակ, յերբ հողը լավ տաքանում է և կունենա 12—15 աստիճան ըստ Յելիսուսի*):

3) Յեզիպտացորենը լույսի շատ կարիք ունի և պահանջում է, վորպեսզի նրա բոլոր տերմները լավ լուսավորվեն: Ուստի և նրան չի կարելի ցանել խիտ, քանի վոր այդպիսի ցանքի գեպքում բույսերն ստվերում են մեկ-մեկու և վատ են զարգանում: Այստեղից բղխում է շարքացանի անհրաժեշտությունը:

4) Վորովիտև յեզիպտացորենը շատ լույս է պահանջում նա չի կարող հաշտվել մոլախոտերի հետ, վորոնք նրան արագությամբ ճնշում են: Ուրեմն յեզիպտացորենը պահանջում է մաքուր դաշտեր, աճման ընթացքում մանրակրկիտ խնամք և բոլոր մոլախոտերի վոչնչացում:

5) Յեզիպտացորենն ունի խոշոր ցողուն և լայն, մսալի տերմներ: Իր զարգացման համար յեզիպտացորենը պահանջում է շատ ջուր, վորը նա իր արմատներով վերցնում է հողից: Յեզիպտացորենի ցանքի հողը պետք է պատրաստել այնպես, վոր ցանելու մոմենտին նա ունենա ջրի մեծ պաշար: Բացի զբանից, յեզիպտացորենի աճման ժամանակ անհրաժեշտ է հողը պահել փմբուն դրությամբ, վորպեսզի շատ խոնավություն չըկորչի: Այս բանն առանձնապես կարևոր է չորային ու այոններում:

6) Յեզիպտացորենը բեղմնավորվում է քամու միջոցով, վորը հեռու յետ տանում ու տարածում նրա փոշին: Ուրեմն յեզիպտացորենի յերկու տեսակները յերբեք չի կարելի ցանել իրար կողքի, այլ նրանց պիտի ցանել մեկ-մեկուց շատ հեռու—2-3 կիլոմետր տարածությամբ:

Ահա այն գլխավոր պահանջները, վորոնք յեզիպտացորենն առաջադրում է հողագործին: Յեզիպտացորենի բերքն ել կախ-

*) Յեզիպտացորենի ցանքի սովորական ժամանակը ապրիլն ու մայիսի սկիզբն եւ:

ված ե նրանից, թե հողագործը վորչա՞փի կկարողանա կատարել այդ պահանջները: Ավեն մի գյուղացի յեվ ամեն մի կոլխոզ պետք է լավ ինչեւ, վոր յեզիպտացորենի բերքը նրանցից է կախված: Հարկավոր է միայն աշխատանք բափել, ուշագրություն յեվ նոգատարություն ցուցահանել յեզիպտացորենի մշակման ժամանակ յեվ նա առատուննենկ վարձատի այդ բոլորը:

Հիմա տեսնենք, թե ցանքափոխության դաշտերում յեզիպտացորենի համար ինչպիսի հերթ պիտի պահպանել:

ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆՆ Ի՞ՆՉ ՏԵՂ ՊԻՏԻ ԲՌՆԻ ՑԱՆՔԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Յանքափոխություն կոչվում է հողի ոգտագործման այնպիսի կարգը, յերբ այդ հողը բաժանվում է վորոշ քանակությամբ մասերի և ամեն մի մասը յուրաքանչյուր տարի ցանքում է վորոշ կուլտուրայով: Թե այդ մասերում ինչպիսի տեղի ունենում կուլտուրաների հերթափոխությունը, այդ ցույց է տալիս հետեւյալ աղյուսակը: Որինակի համար վերցնենք քառաղաշտ ցանքափոխությունը—1) յեզիպտացորեն, 2) աշնանցան, ցորեն, 3) յեզիպտացորեն և 4) կարտոֆիլ:

Տարի-ներ	1-ին հօդամաս	2-րդ հօդամաս	3-րդ հօդամաս	4-րդ հօդամաս
1930	Յեզիպտացորեն	Աշնանաց. ցորեն	Յեզիպտացորեն	Կարտոֆիլ
1931	Աշնանաց. ցորեն	Յեզիպտացորեն	Կարտոֆիլ	Յեզիպտացորեն
1932	Յեզիպտացորեն	Կարտոֆիլ	Յեզիպտացորեն	Աշնանաց. ցորեն
1933	Կարտոֆիլ	Յեզիպտացորեն	Աշնանաց. ցորեն	Յեզիպտացորեն
1934	Յեզիպտացորեն	Աշնանաց. ցորեն	Յեզիպտացորեն	Կարտոֆիլ

Ինչպիսի յերկում է այս աղյուսակից, կոլխոզում կամ հողային ընկերությունում ամբողջ հողը բաժանվում է չորս հավասար մասերի, վորոնց վրա տարեցտարի վորոշ կարգով հերթափոխություն են յերեք կուլտուրաներ: Հինգերորդ տարում այդ ցանքափոխության մեջ ամեն մի կուլտուրա վերադառնում է իր հին տեղը: Յեթե ցանքափոխությունը լինի վոչ թե քառաղաշտ, այլ վեցաղաշտ, ապա կուլտուրաներն իրենց հին տեղը

կվերադառնան յոթերորդ տարում, ուժագաշտ ցանքափոխության գեղջում—իններորդ տարում և այլն:

Թե յուրաքանչյուր առանձին գեղջում ինչպիսի ցանքափոխություն պիտի կատարել, այդ պետք է լուծել ըստ մի ամբողջ շարք պայմանների.—անտեսության մեջ յեղած բույսերի քանակությունը, սրանցից ամեն մեկի կարևորությունն ու յեկամտաքերությունը, հողի վորակը և այլն: Ցանքափոխություն բնորելիս անհրաժեշտ հարցնել գյորդանեցնեսից: Գյուղատնտեսը կմանանշե ամենալավ ցանքափոխությունը և խորհուրդ կտա, թե ինչպես այն կազմել և կատարել: Նայած թե վոր ռայոնում և գտնվում կոլխոզը, ցանքափոխություններն ել տարբեր կիրառություններն են: Խոնավ ռայոնում, վորտեղ գարնանն ու ամառը շատ անձրևներ են գալիս, ցանքափոխությունները պիտի լինեն վորոշ ձեր, իսկ չորային ռայոններում—այլ ձեր:

Ահա, իբր որինակ ցանքափոխությունները խոնավ և չորային ռայոնների համար.—

ԽՈՆԱՎ ՌԱՅՈՆՆԵՐ	ՉՈՐԱՅԻՆ ՌԱՅՈՆՆԵՐ
Հողամասեր	Կուլտուրաներ
1. Յեղիպտացորեն	1. Վաղ կամ խերսոնյան ցել
2. Աշնանացորեն և գարի	2. Աշնանացան ցորեն և գարի
3. Յեղիպտացորեն	3. Յեղիպտացորեն
4. Կարտոֆիլ	4. Բոստանի (սեխ, ձմերուկ, դդում)
5. Յեղիպտացորեն	5. Աշնանացան ցորեն և գարի
6. Բանջարանոցային կուտառաներ (վարունգ, պոմիդոր, սոխ և այլն)	6. Կորեկ, գարնանացան գարի, կարտոֆիլ
7. Յեղիպտացորեն	7. Յեղիպտացորեն, արեածաղկի և այլն:
8. Բուրակ, գաղար, կերի դդում և այլն:	

Չորային ռայոններում, որինակ, Փոքր Կաբարդայում, ինչպուշեթիայի Պաեդախինի ռայոնում, Ոսեթիայի աջ ափերում և Զեչնիայի Թերեքի մոտ գտնվող ռայոններում, զաշտերից մեկում պետք ե ունենալ խերսոնյան ցել: Խերսոնյան ցել կոչվում է այնպիս զաշտը, վորակ յեղիպտացորենը ցանվում է շարքերով, վորոնքպիտի լինեն իրարից 2—4 մետր հեռու, շարքացանի բռնած տարածության մեկ՝ յերկու լայնությամբ: Յեղիպտացորենի աճման ժամանակ շարքերի մեջ յեղած լայն գոտիները մշակվում են ինչպիս ցելի զաշտ, այսինքն քանի մոլախոտեր յերկում են, որանք վոչնչացվում են փոցիներով և բազմախոփ գութաններով: Յաղամ չուրաքանչյուր անձրկից հետո կազմվող կոշտերը վըրվում են փոցինելու միջոցով: Աշնանը յեղիպտացորենի մեջ յեղած այդ լայն տարածություններում ցանվում է աշնանացան ցորեն: Յորենի ցանքը տեղի յէ ունենում շարքացանով, տրակտորի կամ ձիյերի ողնությամբ: Խերսոնյան ցելի վրա յուրաքանչյուր 2—4 մետրից կարող են լինել յեղիպտացորենի մեկական կամ յերեք-չորսական շարքեր (կուլիներ):

Յերբ յեղիպտացորենը հասունանում է, հավաքում են միայն նրա հասկերը, իսկ ցողուններն ամբողջ ձմեռը մնում են գաշտում: Ջմունը այդ ցողունները շատ ձյուն են պահում գաշտերում, իսկ այս բանն ոգտակար է ցորենի համար, վորը ցանվում է խերսոնյան ցելի վրա: Այսաեղ յեղիպտացորենն անպայման պիտի ցանել այնպիս, վորպեսզի նրա շարքերն ընթանան դլխալով վշող քամինների ուղղության լայնությամբ: Յեթե յեղիպտացորենի շարքերն ընթանան քամինների ուղղությամբ, ապա ձյունը վոչ միայն չի պահպի, այլ և բոլորովին դեն կմղվի հողի վերին շերտի հետ միասին:

Կարող են լինել նաև ուրիշ ցանքափոխություններ, վորոնք հարմար են զանազան ռայոնների կամ առանձին կոլխոզների համար: Սակայն ինչ տեսակ ցանքափոխություն ել վոր լինի, պետք է լավ հիշել հետեւյալ կանոնները՝ այս կամ այն հողամասում յեղիպտացորենի տեղի մասին:—

1) Յեղիպտացորենը ցանքափոխության մեջ միշեվնույն հողամասը պես է բանի յերկու տարուց վոչ ավելի:

2) Խօնավ ռայոններում յեղիպտացորենի արտերը պիտի լինեն ցելի դաշտերի փոխարեն, բանի վոր մաքուր ցելերը խո-

նավ ուայօններում ձեռնում չեն:

3) Ուղիղ խնամքի գեպքում յեզիպտացորենը մաքրում է դաշտերը մոլախոտերից: Նշանակում է յեզիպտացորենից նետ կարելի յե ցանել այնպիսի կուլտուրաներ, վորոնի իրենց անման առաջին ուերում առանձնապես վախնենում են մոլախոտերից, որինակ, կերի կանաչները, բուրակը, գաղարը և այն:

Խոնավ ուայօններում, յերբ յեզիպտացորենից հետո կդնա աշնանացան ցորենը, ավելի լավ ե ցանել յեզիպտացորենի վազամշակ տեսակներ, վորպեսնզի նրա հավաքումից հետո մնա 30—45 որ մինչև աշնանացան ցորենի ցանումը: Այդ ժամանակվա ընթացքում վարած հողը կնոտի, իսկ մոլախոտերը կաձեն: Ցորենը ցանելուց առաջ նրանց հեշտությամբ կարելի յե վոչնչացնել փոշտելով կամ մակերեւությային—արագ վարով:

Չորային ուայօններում յեզիպտացորենի դաշտերից մեկն անհրաժեշտ ե զարձնել խերսոնյան վար, վորտեղ յեզիպտացորենից հետո կցանվի աշնանացան ցորեն: Շնորհիվ այն բանի վոր յեզիպտացորենի ցողունները ձյուն են կուտակել, աշնանացան ցորենը չի սառչի և ավելի բարձր բերք կտա:

ԼԱՎ ՄՇԱԿԵՑԵՔ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՀՈՂԸ

Վորպեսզի յեզիպտացորենը լավ աճի և բարձր բերք տա անհրաժեշտ ե պահպանել հետեւյալ կանոնները,—

1) Յեզիպտացորենը ցանել մաքուր (առանց մոլախոտերի) հողում:

2) Յեզիպտացորենի հողը լավ պատրաստել և

3) Անհրաժեշտ ե, վոր ցանքից առաջ հողը հիմնովին տաքանա:

Կարեւոր ե, վոր մինչև ցանքը հողը շարունակի մնալ վարչ ված և ցաքանած դրությամբ: Այսպիսով, հողի վաղ վարելը և մեկ-յերկու անգամ ցաքանելը մինչև ցանքը՝ հանդիսանում են առաջին խոշոր քայլը յեզիպտացորենի բերքատվությունը բարձրացնելու համար: Հողն ավելի լավ ե վարել աշնանից (աշնանավայր): Այդպիսի դաշտն աշնանից չի ցաքանգում, այլ մնում է հզգակայտերով, վորը ձմեռվա ընթացքում նպաստում է հողի մեջ խոնագություն հավաքվելուն:

Այս բանն առանձնապես անհրաժեշտ է այն ուայօններում, վորտեղ յեզիպտացորենն ամառը տառապում է յերաշտից (Ալխանչուրափի հովիան Խոգուշեթիայում և Զեչնիայում, Ոսեթիայի մի քանի ուայօնները, ամբողջ Փոքր Կաքարդան): Աշնանային վարն ամենից լավ ե անել ավելի շուրջ—սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին: Վաղ գարնանը դաւար յերկու նվազ ցախանկում է յերկարե ցախաներով: Չորային ուայօններում այն դաւար, վորը վարած ու պատրասված է աշնանից, վեզ մի դեպքում չի կարելի աշնանը նորից վարել, վորովնետեվ կրեկին վարելը չորացնում է հողը: Իսկ յեթե դաշտում մոլախոտեր բանեն, ապա, բացի ցաքանից, ցանքից իսկույն առաջ նրան կարելի յե փորփրել մի վորեւ վիսրունացնող գործիքով կուլտիվատորով կամ փիրիչով: Յեթե կուլտիվատոր չկա, կարելի յե թեթևակի վերամշակել Յ կամ 4 խոփանոց գութաններով, միայն թե նրանցից անպայման պիտի հանել շրջիները և աշխատել միայն խոփերով: Այս անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի տեղի չունենա հողի շրջում և չորացում:

Խոնավ ուայօններում, յերե հողը մոլախոտերով ե ծածկված, դաւար կարելի յե աշնանը վերավարել, բայց այդ պիտի անել վաղակի:

Յեթե ինչ-ինչ պատճառով չհաջողվի յեզիպտացորենի հող վարել աշնանից, ապա նրան պետք է վարել գարնանը, վորքան կարելի յե շուրջ ու խկույն և յետ ցաքանել յերկու անգամ: Այդ արվում է նրա համար, վորպեսզի վարված հողը մինչև ցանելը մնա և տաքանա վոչ պակաս, օան 25—30 որ: Գարնանավարից 12—14 որ հետո դաշտում կսկսեն բանել մոլախոտեր և դաշտը կսկսի կանաչել: Վորպեսզի վոչնչացնել այդ կանաչը, պետք ե նորից ցաքանել յերկաթե ցաքանով, կամ թեթևակի վարել բազմախոտ գութաններով (բուկկերներով): Հենց ցանելուց առաջ, յեթե միայն այդ կատարվում է առանց վերավարելու, վոչ գութանով, պետք ե անպայման մի անգամ ել ցաքանել հողը, վորպեսզի վոչնչացնել բոլոր մոլախոտերն ու մանրացնել հողի վերին շերտը:

Այսպես ուրեմն, յեզիպտացորենի լավ Բաքաստանայութամար հարկագոր ե՝



1) Աւետից մի լավ յեկ այն ել բավականաչափ խորյամբ (15—20 սանտիմետր) վարել հողը. Վարը կատարել սեպտեմբերին կամ հոկտեմբերին: Յեթե ինչ-ինչ պատճառով չհաջողվի վարել աշնանից, ապա վարը պետք է կատարել գարնանը, վարքան կարելի յե շուտ, 8 սանտիմետր խորությամբ—հենց վոր յեղանակը թույլ տա դաշտ գնալ:

2) Չորային ռայոններում դաշըր ձմեռվա ընթացքում անպայման պիտի բողնել վոչ ցախանված, այլ հողակույտերով:

3) Վաղ գարնանը դաշըր պետք է մի անգամ ել ցախանել:

4) Մինչեվ ցաներ ինչ չափով վոր դաշըր ծածկվի մոլախոներով, պետք ե ներան ցախանել յեկ չքողնել, վոր մոլախոներն անեն: Յեթե դաշտը ուժեղ չափով ծածկվի դրանցով, ապա այն պետք է թեթևակի վարել բուկկերով:

5) Ցաներից հենց անմիջապես առաջ պետք է մի անգամ ել ցախանել, վորպեսզի վերջնականապես վօչնացնել բոլոր մոլախոները:

ՃԻՇՏ ԸՆՏՐԵՑԵՔ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՏԵԽԱԿԱՆԵՐԸ

Յեղիպտացորենի շատ տարբեր տեսակներ գոյություն ունեն—թե ամերիկական և թե մեր: Սակայն բոլոր տեսակներն ել պետքական չեն ազգային շրջանների համար: Ամերիկական շատ լավ տեսակները խիստ բերքատու յեն, բայց և ուշ են հասունում և ազգային շրջանների պայմաններում չեն կարողանում հասունանալ: Մյուս տեսակներն ընդհակառակը, վաղ են հասունանում—որինակ ոգոստոսին ու սեպտեմբերին, բայց սրանք վատ բերք են տալիս: Ընդհանրապես, այնքան ել հասարակ բան չեն հարմար տեսակ ընտրել կոլխոզի կամ գյուղի համար: Այստեղ պետք է շատ զգույշ լինել և նախ քան այս կամ այն տեսակը դաշտ տանելը, պետք է անպայման տեղեկություն իմանալ ամենամոտիկ փորձնական կայանից, թե սա ի՞ր փորձերի հիման վրա վոր տեսակներն ե հանձնարարում: Բացի գրանից, փորձնական կայանի հանձնարարած տեսակներից յերկույթերեքը պետք ե նախապես փորձել սեփական դաշ-

տերում (փոքրիկ տարածությունների վրա) և միայն այս ամենից հետո տվյալ տեսակը մտցնել տնտեսության մեջ:

Ազգային շրջանների չորային ռայոնների (Փոքր Կաբարդա, Ուսեթիայի աջ ափերը, Ինգուշեթիայի Պաեղախինի ռայոնը և Զեչնիայի՝ Թերեքի մոտ ընկած չոր ռայոնները) համար կարելի յե հանձնարարել ուղա պարունակող յեղիպտացորենի ամերիկական մի լավ տեսակը—«Այվորի-կինգ»: Վերջինս այստեղ շատ լավ բերք է տալիս և հասունանում ե տեղական տեսակներից (ապիտակ և դեղին) 7—10 որով ավելի շուտ: Ուղայի և գինու գործարանների համար Այվորի-կինգ տեսակն ավելի լավ և տեղականներից, վորովինետև նրանից մեծ քանակությամբ սպիրտ և ուղա յե դուրս գալիս: Շնորհիվ այդ բանի, 1 ցենտներ Այվորի-կինգը 60—90 կոպեկով ավելի յե գնահատվում, քան տեղական տեսակները:

Ազգային ցցանեների խոնավ ռայոնների, այսինքն նախակենային ռայոնների համար Այվորի-կինգն անպետք է, վորովմետեղ նրա հասկերն այստեղ սաստիկ փրում են: Ուրեմն Կաբարդայի Լեռնային, Նայլչիլյան և Ռուգանյան շրջաններում, Ալագիր-Արդունի և Դիգորի շրջաններում, Ինգուշեթիայի Գալաշինի ու Նազրանի բաղաքամերձ շրջաններում և Զեչնիայի Շատուկի, Վկեղենսկի, Նոժայ-Յուրտի, Իթիում-Կալինի ու Շալինի շրջաններում Այվորի-կինգ ցանել չի կարելի: Այդ շրջանների համար մինչեւ հիմա չի հաջողվել գտնել հարմար և բարձր բերք տվող տեսակներ: Այսպիսի տեսակներ, ինչպիսին ե, որինակ, «Միերլինգը», և այլ ամերիկական ատամնաձև տեսակները—այստեղ ամեն տարի լավ չեն հասունանում, ուրեմն նրանց ցանեն ել վտանգավոր ե: Կան ատամնաձև, բայց Մտերլինգից ավելի շուտ հասունացող տեսակներ, վորոնք միենույն ժամանակ ավելի բերքատու յեն, քան տեղական տեսակները—որինակ, Միննեզոտա 23-ը, Բրուունկոնտին:

Լեռնական գ.-տ. ինստիտուտի սելեկցիոն անկարանը Վկաղիկավկազ քաղաքում, վորաեղ (տնկարանում) զբաղվում են դաշտային բույսերի զանազան տեսակների աճեցումով և փորձով, արդեն հինգ տարի յե, ինչ փորձում ե ամերիկական տեսակները: Յեղիպտացորենի շատ տեսակները մեզ համար ան-

պետք են դուրս յեկել իսկ մի քանիսներն ել կարող են հարմար լինել:

Թե այդ տեսակներից վորը կարող ե պետքական դուրս գալ այս կամ այն ռայոնի ու կոլխոզի համար, այժմ չի կարելի ասել: Այս հարցը պիտի լուծեն իրենք, կոլխոզները, կարգավորելով իրենց դաշտերում տեսակների փորձումը վորքիկ—400—600 քառ. մետր տարածությամբ հողամասերում, փորձելով ամեն մի տեսակը: Փորձը պետք ե կատարել այսպես, վորպեսզի բոլոր տեսակները ցանվեն իրար մոտ և նույն տեղում համեմատության համար ցանվեն նաև տեղական տեսակները:

Յանելու համար սերմացուներ կարելի յե ստանալ շրջանային հողային վարչություններում կամ տեսակների փորձման մասերում, վորոնցից հիմա ամեն մի ազգային շրջանում մի քանիսները կան: Յեթե պարզվի, վոր փորձվող տեսակներից և վոչ մեկը չի տալիս ավելի բարձր բերք, քան տեղական տեսակները, ապա պետք ե ցանել տեղական սպիտակ տեսակը: Յեզրիպտացորենի այդ տեսակը, վորն ազգային շրջաններում մշակվում ե արդեն հարյուրավոր տարիներ, շատ կայուն է: Ճիշտ ե, նա ունի մի քանի վատ հատկություններ, վորոնք ապարժեք են դարձնում նրան: Տեղական տեսակի թերությունը կայանում ե նրանում, վոր նա շատ բազմազան է, խայտարդետ: Միևնույն դաշտում պատահում են նրա զանազան բույսերը—բարձր և ցածր, ուշ և շուտ հասունացող, բերբառու և անբերք, խոշոր և մանր հասկերով և այն: Բացի դրանից, տեղական տեսակն ունի հասկի շատ հաստ միջուկ, վորը նույնպես թերություն պիտի համարել:

Ուրեմն ամեն տարի ցանելու համար պետք ե անպայման չոկել տեղական տեսակի ամենալավ հասկերը: Շնորհիվ այդ բանի, կարելի յե զգալիաչափ բարելավել յեզրիպտացորենի տեղական տեսակները:

ՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶՈԿԵՑԵՔ ԱՄԵՆԱԼԱՎ ՀԱՍԿԵՐԸ

Ճշտորեն պատրաստելով դաշտն, այնտեղ պիտի ցանել լավ տեսակից և լավ սերմացու, վորովհետև վատ տեսակի ու վատ սերմացույի դեպքում ամբողջ աշխատանքն իզուր կարող ե

կորչել: Դրանից ել առաջ են յեկել այսպիսի ժողովրդական առածներ—«վաս սերմից բարի պտուղ մի սպասիր», «ինչ կցանեն, այն կհնձնես»: Յանելու համար չոկել լավ հասկերը և պատրաստել լավ սերմացու—սա շատ հասարակ բան ե և այդ կարող ե անել ամեն մի կոլխոզ ու ամեն մի անհատ տնտեսատեր գյուղացի: Միայն թե հարկավոր ե մեծ ուշադրությամբ մոտենալ այդ աշխատանքին:

Ամենալավ հասկերը չոկելու և սերմացույի մասին պետք է հոգ տանել վոչ թե ցանքից յերկու որ առաջ, ինչպես այդ արվում է հաճախ, այլ ավելի վաղ: Ամենից լավ և հասկերը չոկել ուղղակի դաշտում, աշնանից, յերբ յեզրիպտացորենը գեռ չի հավաքված: Պետք ե առանձին հավաքել ամենալավ հասկերը ազգային վարչությունը լավ հասունացել են, ամենաառողջ և ուժեղ բույրը, վորոնք լավ հասունացել են, ամենաառողջ և ուժեղ բույրը, սերմից են, լիքը, ուղիղ շարքերով և լրացված վերին մասերով:

Հասկերը պետք ե վերցնել միայն չորացած բույսերից, վորոնց հասկերի բոլորքը միանգամայն չորացել ե, դեղնել և խշացում ե ձեռքի մեջ: Յեթե բույսի վրա կա յերկու կամ յերեք հասկ, ապա սերմացույի համար պիտի վերցնել միան ներքեվի մեկ հասկը, իրենվ ամենից լավ հասունացածը: Զրպետք ե վերցնել վատ, ծուռը յեկ անկանով հասկերը, ինչպես նայեկ բազմաւրեմները (թեկուզ յեկ ուղիի): Բազմաշարք հասկերը, վորոնք ունեն 14-ից մինչև 18 հատիկային շարքեր, տալիս են ուշ հասունացող և թույլ բերքատու բույսեր: Ամենից լավ և վերցնել այն հասկերը, վորոնք ունեն հատիկների 10—12 շարքեր: Սերմացույի համար չոկած հասկերը պիտի մաքրել նրանց շուրջն յեղած անպետք մասերից և կապել բարկ պարանով:

Սյո կապօցները կախում են չոր տեղում—տանիքում, սարայում կամ նույնիսկ սենյակում, պատերի վրա յեկ այդ դրությամբ պահում են ավերող ձմեռը, մինչեվ գարնանացանը: Սերմացույի հասկերը վոչ մի դեպքում չի կարելի պանել կողովներում, կուտակված դրությամբ յեկ, ընդհանրապես, խոնավ տեղերում: Այս վերջին ձմեռ պահելու դեպքում սադմերը խիստ տառապում են խոնավությունից, բոլորովին չեն աճում կամ վատ հասկավոր բույսեր են տալիս:

Գարնանը, ցանքից տուջ, ջոկած հասկերի վրա պէտք է
յերկու աշխատանք ել կատարել: Նախ՝ պետք է վորոշել, թե
արդյոք բոլո՞ր հասկերն են կենդանի, այսինքն արդյոք պիտի
անե՞ն նրանց հատիկները: Յերկրորդ, սերմացույի համար պետք
է ջոկել ամեն մի հասկի միայն ամենալավ ու խոշոր հա-
տիկները: Վորպեսզի իմանալ, թե արդյոք պիտի աճե՞ն սերմե-
րը և լավ ծիլեր տան, պետք է ամեն մի հասկից հանել վեց
հաստիկ և աճեցնել սրանց: Հատիկները պիտի հանել հասկի զա-
նազան տեղերից:

Այդ հատիկները փորձելու համար լցվում են առանձին արկղի մեջ, վորք կոչվում է բուսանոց: Սա շինվում է բարակ տախտակներից կամ ֆաներից և իր ձևով ու չափով նման է խնձոր և այլ մրգեղեն լցնելու արկղին, միայն առանց մեջտեղում պատ ունենալու: Արկղը լցվում է թեփով կամ տաշեղներով, վերևից ամուր ծածկվում է բյազով կամ մի այլ սպիտակ կառուղեղնով, վորք պիտի բաժանված լինի 100 հատ համարակալված վանդակների: Ամեն մի վանդակում դրվում է մի հասկից վերցրած 6 հատիկ, իսկ հասկի վրա մատիտով դրվում և համապատասխան վանդակի համարը: Կտորեղենը և թեփը թրջվում են գոլ ջրով, արկղը դրվում է լուսամուտի վրա, առեփ կողմը և վերևից ծածկվում է փայտե կափարիչով: Արկղը լցում հատիկները պիտի պահել 5-6 որ և կտորեղենն ամեն որ թեթև կերպով թրջել ջրով:

5-6 որից հետո հատիկները դիավում են և զրգում ե, թե
վոր վանդակներում հատիկները չեն բռւսել կամ ունեն թույլ
և հիվանդություն ծիլեր։ Այս հասկերը, վորոնք կտան բոլորովին
շաճած հատիկներ կամ վատ ու հիվանդություն աճում, իսկույն և
յետ առանձնացվում են, և ցաներու չեն ուղարկվում։ Իսկ այս
հասկերը, վորոնք կտան առողջ և լավ աճում, կոտրամավում են։

Սերմացույի համար վերցվում են հասկերի միայն միջին մասերը, վորոնք պարունակում են ամենալավ, խոշոր, լավ զարգացած հատիկներ, իսկ սրանք ունեն մեծ սաղմեր. Միայն այդպիսի հատիկներն են ցանքի համար պետքական. Իսկ հակերի վերջին և ներքին մասերը սովորաբար ունենում են մանր, կիսազարգացած հատիկներ, վերջիններս ել-թույ սաղմերը

Յանելու գեպքում նրանք տալիս են շատ լդար բույսեր, վո-
րոնք բոլորովին չեն զարգանում կամ տալիս են մանր, ծուռը
վոչ լիքը հասկեր: Սերմացու ջոկելու այդ ամբողջ աշխատանքը
շատ հասարակ է և ամեն մի կոլխոզ հեշտությամբ կարող է
կատարել այս: Յեթե ճշտությամբ և ուշադրությամբ ջոկել
սերմացույի հասկերն, ապա այդ կոտ ամեն մի հեկտարից 4-5-ից
ամելի ցենտներ բերք:

ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՈՒՂԻՂ՝ ՑԱՆՔՆ

ՅԵՎ ԱՅԴ ՑԱՆՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Մենք տեսանք, թե ինչպես պիտի պատրաստել գտշտերը՝ ցանելու համար ջոկել ամենալավ հասկերն և ուղիղ կերպով պահել դրանք: Բայց այդ գեռ բոլորը չեն: Յեզիպտացորենի բարձր բերք ստանալու համար պիտք է կանոնափոր և իր ժամանակին կատարել ցանքը և լավ խնամել յեզիպտացորենի արտը:

Ի՞նչ բան ե յեզիւստացորենի կանոնավոր ցանքը: Այդ հարցին պատասխանելու համար նախ տեսնենք, թե ներկայումս աղքային քրջաններում ինչպես ե կատարվում ցանքը: Գարնա-նը, սովորաբար միշտ շատ ուշ, հատիկները թափում են շր-վարված հողը, զորը վարդում ե գութանով: Այսպիսով քեզիպ-տացորենի հատիկն ընկնում ե կոշտ, չփառունացրած հողի վրա և վերելից ծածկվում ե չոր հողի հաստ շերտով: Այս գեպքում ծիլը յերկար ժամանակ չի դուրս գալիս, իմակ դուրս գալով, յերկար անցնում ե չոր և պինդ հողի հաստ շերտի միջով և վերջ ի վերջո ստացվում ե վտիա, թույլ բույս:

Վորպեսզի լավ բերք ստանալ, հարկավոր ե արմատապես փոխել ցանկքի այդպիսի յեղանակը: Մենք արգեն առաջինք, վոր յեգիպտացորենի դաշտը պիտի վարել աշնանից կամ վաղ դարնանը: Ուստի և ցանել հարկավոր ե անպայման վաղորոք վարած դաշտում: Այնումետեղ անհրաժեշ է կատարել շարժացան յեվ սերմերը տեղափոխել կանոնավոր յեվ նավասար շարժերով, վորոնի պետք ե լինեն իրարից 50—60 սանտիմետր հեռու: Սկզբում յեգիպտացորենը շարքերի մեջ ցանփում է խիտ, մոտավորապես հատիկը հատիկից 8—10 սանտիմետր

Նեռու: Բայց ծիլերն յերևալուց հետո, յերբ բույսերն այնքան կամքանան, վոր ազուավերը չեն կարողանան նրանց կտցել, ավելորդ բույսերը ջռկվում են և նրանք թողնվում են իրարից միայն 50—60 սանտիմետր հեռավորության վրա: Շարքային ցանքը հարկավոր է նրա համար, վոր յեգիպտացորենի աճման ժամանակ նրան կարելի լինի մշակել շարքերի մեջ, թորիս կոչված ձիու գործիքներով կամ պլանետներով:

Շարքային ցանք կատարելու համար գոյություն ունեն շատ գործիքներ և մեքենաներ: Բոլորին հայտնի յեն շարքացանային ձիավոր ցանիչները: Նրանք լինում են հատկապես յեգիպտացորենի համար (ամերիկական) և ընդհանուր, վորով կարելի յեց ցանել նաև ուրիշ հացահատիկներ: Հացահատիկային ցանիչով յեգիպտացորեն ցանելիս պետք է միայն հանել ավելորդ խոփերը, փորպեսզի շարքերի մեջ լինեն հարկավոր լայն տարածությունները:

Ներկայում յեգիպտացորենի ամենալավ ցանիչներ հանդիսանում են ամերիկական յեռաշարք ցանիչները, վօրոնցով կարելի յեց ցանել թե ձիյերի յեկ թե տրակորի ոգնությամբ: Մեկ ցանիչով որական կարելի յեց ցանել մոտավորապես 5-6 հեկտար: Այդ ցանիչները շատ հարմար են, վորովհետև նրանք տալիս են միանդամայն կանոնավոր և ուղիղ շարքեր, քիչ հացահատիկ են ծախսում և նրանցով հեշտությամբ կարելի յեց կատարել նաև միաշարք ձիավոր ցանիչներով և ձեռքի ցանիչներով: Այս մեքենաներով ցանելու գեպքում անհրաժեշտ է սկզբում դաշտում նշաններ անել, վորի համար գոյություն ունի հատուկ և պարզ մի գործիք, վորը կոչվում է մարկեր, կամ նշիչ: Մարկերը բաղկացած է փայտյա ձողիկից, ձին լծելու համար լծափայտերով և կտրիչներով—ակոսներ վարելու համար: Կտրիչները (չցին) կարող են լինել յերկաթից կամ փայտից: Յերբ ամբողջ դաշտը ծածկվի ակոսներով, կարելի յեց ցանքը կատարել միաձի ցանիչով կամ ձեռքի ցանիչով:

Ցանիչ մեքենային լծվում է մի ձի, լծափոկերով և սանձով առաջնորդվում է այնպես, վորպեսզի խոփիկը գնա հենց այն ակոսով, վորը քաշված է մարկերով: Ցանիչի յետել մասում կան կոթեր, վորոնց միջոցով աշխատողը, վորը գնում է

ցանիչի յետելից, կառավարում է վերջինիս և շարունակ նրան պահում է մարկերով քաշած ակոսի վրա: Ձեռքի ցանիչն ընդամենը մի բանվոր է պահանջում և նրանով ցանքը շատ հեշտ է կատարվում: Ձիու կամ ձեռքի ցանիչով ցանելուց հետո ցաքանել չի հարկավոր, քանի վոր այդ գործիքներն իրենք լավ ցաքանում են այնպես, վոր հատիկները հողում տեղավորվում են 5—7 սանտիմետր խորությամբ: Միաշարք ցանիչով և մեկ ձիով ու յերկու բանվորով որական կարելի յեց ցանել 1 և կես—2 հեկտար: Ձեռքի ցանիչով մեկ բանվորը կարող է ցանել յերեք-քառորդ հեկտար:

Յեթե անտեսության մեջ չկա վոչ ձիու և վոչ ել ձեռքի ցանիչ, պայա շարքային ցանքը կարելի յեց անել սովորական գութանով: Դրա համար սկզբում նշիչով ակոսները են անցկաց վում, այնուհետև այդ ակոսների վրա գութանով ավելի լայն ակոսները են քաշվում—5—8 սանտիմետր խորությամբ: Գութանի յետելից գնում է բանվորը և յեգիպտացորենի հատիկներ պցում է ակոսների մեջ այնպես, վոր նրանք ընկնեն իրարից 5—8 սանտիմետր տարածության վրա: Ձախրարից 5—8 սանտիմետր ցանքում է անգամ ակոսների լայնությամբ: Այս յեղանակը գործադրելուց այնպիսի կանոնավոր ցանք չի ստացվում, ինչպես ձիու կամ ձեռքի ցանիչով աշխատելիս: Բայց այնուամենայնիվ, գութանով ցանեն ել տալիս և լավ շարքեր, վորոնք հետո թույլ են տալիս իրենց միջև մշակում կատարել: Գութանով շարքային ցանք կատարելու գեպքում, ակոսներ անցկացնելիս, ստացվում է յերկրորդ վար, բայց այդ լինում է վոչ թե ամբողջ դաշտում, այլ միայն առանձին շարքերով: Այստեղ վերավարած է լինում մոտավորապես դաշտի միայն 1—յերրորդ մասը, վորովհետև մարկերն ակոսներն անց և կացնում 50—60 սանտիմետրի վրայով, իսկ գութանը բանում է 15—20 սանտիմետրանոց ակոս:

Վարպեսզի յեգիպտացորենն արագ անի, լավ զարգանա յեկ բարձր բերք տա, պես և ցանեն իր ժամանակին կատարել: Սովորաբար լեռնեցիներն յեգիպտացորենի ցանքն սկսում են շատ ուշ, քաշքելով այն մինչև հունիսի սկիզբը: Այդպիսի ուշ ցանքի շնորհիվ ուշ են հասունանում և հաճախ նույնիսկ

առաջում են յեզիպտացորենի հատիկները և աշնանը լինում են կիսահասունացած վիճակում։ Այդպես ե յեղեք որինակ, 1928 թվականին, Ասեմխիայում և Ինգուշեթիայում։ Մյուս կողմից յեզիպտացորենի համար շատ փաղ ցանքն ևս անպետք ե, փորովնետեւ յեզիպտացորենի հատիկը շատ տաքություն և պահանջում աճելու համար և սառը հողում փթում ե:

Ուրեմն ամեն տեղ պետք է գիտենալ, թե յերբ և ավելի լավ ցանել յեզիպտացորեն։ Յանքը պետք է կատարել այն ժամանակ, յերբ հողը բավականաչափ տաքացել ե։ Այդ բանը կարելի յե հեշտությամբ իմանալ, յեթե ձեռքը մացնել հողի վերին, փիրունացած շերտի մեջ։ Յեթե ուժեղ սառնություն չըգացվի, ուրեմն կարելի յև ցտնել։ Այն տեղում, վորտեղ հողը թեթև ե, ափազոտ և գարնանը քիչ անձրիներ են գալիս, պետք ե ցանել մոտավորապես ապրիլի 10—15-ին։ Այնտեղ, վորտեղ հողը կափային ե և գարնանը շատ անձրիներ են գալիս, ցանքը պիտի կատարել ապրիլի 20-ից մինչև մայիսի 1-ը։

Յեզիպտացորենը կանոնավոր յեկ իր ժամանակին ցանելն ազգային ըրջանների համար մի չափազանց կարելոր գործ և հանդիսանում։ Սրանից ե կախված յեզիպտացորենի բերքը։

ՈՒՂԻՂ ԽՆԱՄԵՑԵՔ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻՆ

Ներկայումս ազգային շրջաններում յեզիպտացորենի ամրող խնամքը կայանում և նրանում, վոր յերեք-չորս անգամ ցաքանում են և մեկ անգամ ձեռքի քաղին անում։ Այդպիսի խնամքն անպետք ե, քանի վոր ցաքանները կոտրատում ե յեզիպտացորենը, կտրում ե նրա արմատները և առնասարակ, թուլացնում ե նրան։ Այս պատճառով ել յեզիպտացորենը ցաքաննել չի կարելի, այլ դրա փոխարեն նրան պետք ե մշակել առանձին գործիքներով—ձեռնարորներով, վորոնք կոչվում են ձիավոր («պանետներ»)։ Պանետները թեթև են և շատ հարմար են աշխատանքի համար։ Յերկու բանվոր, վորոնցից մեկն անչափահաս (ձին ե քշում), որական կարող են մշակել մինչև 1 և կես հեկտար։ Պանետների հարմարությունը կայանում է նրանում, վոր նրանցով կարելի յե հողի գանազան խորություն

վերցնել և մեկ անգամ անցնելիս կարելի յե վերցնել յերբեմն լայն, յերեմն նեղ գոտի։ Բացի դրանից, պլանետն ունի մի ամբողջ շարք զանազան թաթիկներ, վորոնք հեշտությամբ փոխվող շափում են, նայած թե ինչ չափով են հողակարգեր։

Ավելի հասարակ և եժան ե թորիս։ Բայց նրանով աշխատելն այնքան ել հարմար չե, վորովհետեւ նրա միջոցով ավելի դժվար է կանոնավոր կերպով խորություն և լայնություն վերցնել։ Պետք ե հիշել վոր չորային ույուններում թորիսերով չի կարելի մշակել յեզիպտացորենը, վորովհետեւ նա սաստիկ չորացնում ե հողը։ Թորիսը ձեռնտու յե ունենալ խոնավ ուայններում, վորովհետեւ նրանով կարելի յե թե յեզիպտացորեն և թե կարառֆիլ մշակել։

Վերջապես, կան նաև ձեռքի պլանետներ։ Սրանք եժան են, բայց սրանցով աշխատել պետք և առանց ձիու, վոր բավական դժվար ե։ Համենայն գիպս, ունենալով նկարագրած յերեք գործիքներից մեկը, կարելի յե շատ լավ մշակել յեզիպտացորենի դաշտերը։

Յեզիպտացորենի դաշտերի մշակման հիմնական ինսուլը կայանում ե մոլախոտերը վոչնչացնելու և հողը փիրունացնելու մեջ։ Յեթե յեզիպտացորենի դաշտը և մոլախոտերից և յեթե այնտեղ հողը միշտ փիրուն ե, ապա լավ բերքը միշտ ապահոված ե, անկախ ամառվա յեղանակից։ Յուրաքանչյուր կողեկտիվ տնտեսություն և ամեն մի հողագործ լավ պիտի հիշեն այս բանը։

Յեզիպտացորենի խնամքը պիտի սկսվի նրա ծիլերը յերեվալուց անմիջապես հետո։ Հենց վոր այդ ծիլերն ամրանան, պետք ե շարքեր բանալ, քանի վոր սկզբում յեզիպտացորենը շիտ ցանվում։ Խիտ ցանքը կատարվում է նրա համար, վորպեսզի վատ ծիլերի գեպքում տնտեսությունն ապահոված լինի։ Առաջին նոսրացումը պիտի կատարել շատ զդույշ չպոկելով բոլոր պիտի բույսերն, այլ յեզիպտացորենը թողնելով իրարից 10—15 սանտիմետր տարածությամբ շարքերում։ Այս ել դարձյալ հարկավոր և սկզբնական ժամանակում առանձին բույսերի փշանալու զեպքում, յերբ յեզիպտացորենի բույսը գեռ շատ քննույշ ե և թույլ։

Առաջին անգամ շարքերը բանալուց 8—10 որ հետո տեղի յե ունենում յերկրորդ ու վերջնական շարքեր բանալը, յերք շարքերում մնում են 50—60 սանտիմետր իրարից հեռու գլուխնվոր բույսերը։ Շարքերը բանալիս պետք է արմատահանել մոլախոտերը, վորոնք յեզիպատացորենին շատ մոտիկ են բանում — այլապես նրանք կարող են նեղել մատաղ ծիլերին։ Յերկրորդ անգամ շարքեր բանալուց անմիջապես հետո, ծիավոր կամ ձեռքի գործիքներով անպայման պետք է կատարել շարքամիջի տարածությունների առաջին մշակումը։

Նարեց բանալն յեվ առաջին բաղիանը ամենազիավոր աշխատանիներն են հանդիսանում լավ բերք ստանալու համար։ Այս պատճառով ամեն մի կոլխոզ և ամեն մի գյուղացի պետք է առանձնապես լուրջ ուշադրություն դարձնեն այդ բանին։ Այդ աշխատանքները պիտի կատարել ժամանակին և ծշտապահությամբ։ Պետք է աշխատել, վորպեսզի շարքեր բանալուց և առաջին մշակումից հետո դաշտում չնայ և վոչ մի մոլախոտ։ Յերե յեզիպատացորենի անմաս առաջին ժամանակամիջոցում դաշն անխնամ բողոքի յեվ տարեց բանալն ու առաջին բաղիանը կատարվեն ուշացումով, այդ դեպքում ամբողջ գործը ջաւրը կընկնի յեվ հետագա վոչ մի աշխատանիով նա չի ուղղվի։

Առաջին քաղանը պիտի կատարել խորը, մոտավորապես 7 սամտիմետրով, քանի վոր յեզիպատացորենի զարգացման առաջին ժամանակամիջոցում նրա արմատները խորն են գտնվում և վտանգ չկա, թե քաղանելու ժամանակ կարելի յե վնասել նրանց։ Նայած թե ամառը վորքան անձրևային ե, դաշտում վորքան մոլախոտեր կան և սրանք վորքան արագ են դարձանում, առաջին քաղանից հետո կատարում են դարձյալ յերկույթը քաղան։ Թե ինչպիսի ժամկետերում պիտի այդ անել, վաղորոք ասել չի կարելի։ Այստեղ ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես կաձեն յեզիպատացորենն ու մոլախոտերը։ Համենայն դեպս, չի կարելի թույլ տալ, վոր դաշտը ծածկվի մոլախոտերով։ Այս պատճառով հենց վոր շարքամիջի տարածությունները ծածկվեն մոլախոտերով, իսկույն և յետ պետք է փետատներով ձեռքի քաղան անել յեզիպատացորենի բույ-

սերի շուրջը, վորտեղ սովորաբար շատ մոլախոտեր են պատը։ պարզում և վորտեղ ձեռնարորը հասցնել չի կարելի։ Այս բանը պետք է լավ հիշել, թե չե քաղաննելը չի ոգնի։

Յերկրորդ քաղանը պիտի անել ավելի յերեսանց, քան առաջինը, յերրորդն ավելի յերեսանց և չորրորդը գարձյալ ավելի յերեսանց, այնպես վոր վերջինը լինի վոչ ավելի, քան 2—3 սանտիմետր խորությամբ։ Այդ բանը պետք է ձիշտ պահպանել վորովհետեւ հետզհետեւ աճելով, յեզիպատացորենը ձգում է նորանոր արմատները, վորոնք յերկրի մակերեսույթին մոտիկ են լինում։ Խորունկ վարելու դեպքում նրանց կարելի յե վնասել և դրանից կվասվեն նաև բույսերը։

Յեզիպատացորենի լավ բերքը կախված է այն բանից, թե նրան խնամելու այդ բոլոր աշխատանքները վորչափ իր ժամանակին կկատարվեն։ Գործը չի կարելի ուշացնել նույնիսկ մի քանի որով, քանի վոր ամեն մի բաց թողած որը վատացնում է յեզիպատացորենի աճումն և ուրեմն ցածրացնում է նրա բերքը։ Ամերիկացիք, վորոնք շատ լավ գիտեն յեզիպատացորենին խնամելը, ասում են, վոր քաղանների համար ամեն մի բաց թողած որը բերքը պակասեցնում է ամեն մի հեկտարից 1 և կես ցենտներ։

ԿՈՎԵՑԵՔ ՅԵԳԻՊՏԱՑՐԵՆԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Իր աճման ժամանակ յեզիպատացորենը յենթարկվում է շատ ու շատ թշնամիների հարձակման, վորոնք մեծ վնասներ են հասցնում նրան։ Ամենից առաջ յեզիպատացորենի թշնամիներ հանդիսանում են թռչունները՝ ճայերը և զանազան ազուավերը, վորոնք հողից կտցում են յեզիպատացորենի աճած հատիկները։ Սուլիկը և խոմյակը նույնպես հանդիսանում են յեզիպատացորենի վնասատուներ, քանի վոր նրանք յեզիպատացորենի հատիկների մեծ պաշար են հավաքում իրենց բներում, իսկ աշնանն ու գարնանը կերակրվում են այդ պաշարով։ Այնուհետև, յեզիպատացորենի հատիկները հողի մեջ ուտում են զանազան միջատներ, որինակ, խլրդածղրիտի և լարաձև ձիճույի թրթունները։ Սրդեն աճման ժամանակ յեզիպատացորենային թիթեռը, յեզիպատացորենային բուսաթիթեռը և շատ ուրիշ միջատնե-

թթ թրթուռներն ուստում են հատիկները: Վերջին յերկու վսասատուներն ամենավտանգավորն են, վորովհետև նրանք մեծ քանակությամբ հացահատիկներ են ուստում, վորոնք գտնվում են դեռ մատաղ հասկերում: և իրենց շարժվելով փչացնում են նրանց:

Այդ բոլոր վսասատուները գտնվավոր են նրանով, վոր նրանք շատ լափող են և յեգիպտացորենի հատիկների հսկայական քանակություն են ուստում: Դիտնականները հաշվել են, վոր յեթե յեգիպտացորենի բոլոր վսասատուները վոչնչացվեն, ապա նա յերկու անգամ ավելի բերք կտա, քան տալիս ե այժմ: Այս պատճառով հարկավոր ե անպայման կովել յեգիպտացորենի վսասատուների դեմ և բոլոր միջոցներով ու յեղանակներով անխնա վոչնչացնել նրանց:

Դժբախտաբար դեռ գոյություն չունեն պայքարի այնպիսի միջոցներ, վորոնք մի անգամ ընդմիշտ վոչնչացնեն յեգիպտացորենի տվյալ վայրի վսասատուներին: Զե՞ վոր չի կարելի մինչեւ վերջին վսասատուն վոչնչացնել բոլոր վսասատուներին: Իսկ յեթե սրանց մի մասը կենդանի մնա, ապա մի քանի տարբա ընթացքում նրանք նորից կրազմանան: Ուրեմն վսասատուների դեմ պետք ե պայքարել ամեն տարի: Միայն այս դեպում նրանք զգալիաչափ կպակասեն:

Թոչունների դեմ պայքարելու համար, վորոնք գարնանը կտցում են յեգիպտացորենի հատիկներն ու ծիլերը, պետք ե աչալրջությամբ պահպանել դաշտերը: Զանազան, ագռավիերն ու ճայերը ցանքերի վրա հարձակում են մեծ յերամներով, վիխավորապես վաղ առավոտյան, արեկ ծագման ժամանակ: Այս պատճառով մոտավորապես գիշերվա ժամը 2-ից մինչեւ առավոտյան 5-ը դաշտերում պետք ե լինեն հրացաններով զինված պահապաններ, վորոնք պետք ե հաճախակի կրակեն թոչունների վրա: Հրացանաձգությունը շատ ե վախեցնում թոչուններին և սրանք յերկուող են կրում դաշտ իշնելու համար: Այսպիսի պահապանություն պետք ե ունենալ առաջին ծիլերը յերեալուց մինչ այն ժամանակ, յերբ յեգիպտացորենի բույսերը կամրանան, ինչ վոր սովորաբար շարունակվում ե 10—15 որվա ընթացքում: Սուսլիկների և խոմյակների դեմ պայքարը տեղի

յե ունենում գլխավորապես նրանց իրենց բներում թունավորելով: Դրա համար բների մեջ նետվում են բամբակի, բրդիկամ կանեփի կտորներ, վորոնք թրջված են ծծմբաածխածինով կամ ուրիշ թույներով: Սուսլիկների և խոմյակների դեմ պայքարելու համար թույներ և այլ պարագաներ, ինչպես և սրանց գործածության վերաբերյալ ցուցմունքներ կարելի յե ստանալ ույոնական գյուղատնտեսից կամ ույոնական հողբաժնում:*)

Յեգիպտացորենային թիթեռի և յեգիպտացորենային բուսաթիթեռի դեմ պայքարը կայանում ե հետևյալում:

1) Յեգիպտացորենը հնձելուց հետո դաշտը պետք ե անպայման վարել աշնանից: Այս դեպքում գութանի միջոցով շատ միջատներ գուրս կդան հողի տակից և կկոտորվեն: Յեգիպտացորենային թիթեռի թրթուռները ձմեռում են յեգիպտացորենի ցողուններում, ուստի և անհրաժեշտ ե աշնանն ու ձմռանը դաշտից հավաքել բոլոր ցողունները և ապա դրանք կամ վագաշտից հավաքել բոլոր ցողունները և ապա դրանք կամ վաեր, կամ անասուններին տալ վորպես կեր:

2) Գարնանը անհրաժեշտ ե մանրակրկիտ կերպով վոչնչացնել բոլոր մոլախոտերը վոչ միայն դաշտերում, այլ և սրանց շաշնել բոլոր մոլախոտերը վոչ միայն դաշտերում, այլ և սրանց շուրջը յեղած միջատարածություններում, վորովհետև վաղ գարնանը միջատներն արթնանում են և սկզբներում ապրում են զանազան մոլախոտերի տերևների վրա:

3) Ամառն այդ միջատների թրթուռներին պետք ե վորսալ ուռկաններով և վոչնչացնել:

4) Յեգիպտացորենի հասկերը հավաքելիս նրանց պետք ե ուշադրությամբ զննել: Յեթե հասկերի վրա լինեն յեգիպտացորենային թիթեռի թրթուռ կամ բուսաթիթեռ նրանց պետք ե տեղն ու տեղը վոչնչացնել:

Բացի այստեղ թված թշնամիներից, յեգիպտացորենը վսասատուներ ունի նաև բուսական աշխարհի մեջ: Զանազան սունկերը, ինչպիսին են՝ գոլովյան, ժանդը և այլն—նույնպես սասաւունների վոչնչացնել:

*.) «Северный Кавказ» հրատարակչությունը լուս է ընծայել հետեւյալ գլուքուները, վորոնց մեջ մանրամասն խոսում ե վսասատուների դեմ կռվելու մասին.

1. ՇԶԵԳՈԼԵՎ. — «Агрокультурные приемы борьбы с вредителями зерновых хлебов на Северном Кавказе».

2. ԱՎԻՐԻԴԵՆԿՈ. — «Борьба с вредными грызунами и массовыми саранчевыми хлебов на Северном Кавказе».

3. ԼՈԲԻԿ. — «Головня хлебов и меры борьбы с ней».

տիկ վասում են յեգիպտացորենին: Առանձնապես մեծ վաս ե բերում յեգիպտացորենային գոլովայան, վորն ամբողջովին վո-
չնչացնում ե հատիկները հասկերում, վորտեղ նա տեղավորվում
ե: Այդպիսի հասկերում չի մնում և վոչ մի հատիկ և նրանք
լցված են լինում սև փոշով: Այդ սև փոշին ել հենց յեգիպ-
տացորենային գոլովայան ե, վորը կերել ե հատիկներս և բաղ-
մացել ե այսպես, վոր հասկերը դառնում են հաստ, կարծես
թե ուռած: Այդպիսի ուռած հասկերը հեշտ ե ճանաչել հեռվից:

Գոլովայի դեմ պայքարելու համար հարկավոր ե յեգիպ-
տացորենը հավաքելուց 2—3 շաբաթ առաջ անցնել բոլոր շար-
քերով և պոկել բոլոր վասպած, ուռած հասկերը: Հավաքված
անառողջ հասկերն անպայման պիտի վառել կամ թաղել հողի
մեջ:

ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ Ի՞ՆՉ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿՏԱ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՄՇԱԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Մենք տեսանք, վոր յեգիպտացորենը խնամելու աշխա-
տանքը շատ ե և նրա մշակումը քիչ ջանք և ուշադրություն չի
պահանջում: Ուրեմն ի՞նչ կարելի յե ստանալ այդ բոլոր ջան-
քերի համար: Արդյոք յեգիպտացորենի բերքն արդարացնում ե
ամբողջ աշխատանքն և ծախսերը:

Վորպեսզի պատասխանել այդ հարցերին, մենք կբերենք
յուրաքանչյուր աշխատանքի արժեքը յեգիպտացորենի մշակ-
ման հին ձեկի գեպքում, վորն այժմ գործադրվում ե ազգային
շրջաններում և նոր ձեերով մշակելու գեպքում, վորոնք այս-
տեղ նկարագրվեցին:

Մեկ հեկտար յեգիպտացորենի մշակման բոլոր աշխատանք-
ների արժեքը ցույց է տրված 31-րդ եջի աղյուսյակում:

Ուրեմն յեթե կատարել այստեղ նկարագրած բոլոր աշխա-
տանքներն, ապա 1 հեկտարը կնստի 36 ոռոբլի ավելի, քան
թե հիմա նստում ե լեռնեցի գյուղացիության վրա:*)

*) Աշխատանքների արժեքը հաշվելիս, տղամարդու տշխատանքի
գարձատությունն ընդունված ե որական 1 ռ. 50 կոպեկ, կնոջը—1
ռուբ. 20 կոպ. և անչափահասինը—75 կոպեկ: Հաշվի յե առնված նաև
ձեյերի և արակտորների աշխատանքի վարձատրությունը:

Վերևում մենք մատնանշեցինք, վոր յեգիպտացորենի հին
յեղանակով մշակման դեպքում միայն ունթիւական անտեսու-
թյուններն ստանում վորեւ յեկամուտ: Իսկ մնացած շրջաննե-
րում յեկամուտները բոլորովին քիչ են յեղել, կամ թե յեգիպ-
տացորենի բերքը նույնիսկ չի հանել գործադրված աշխատան-
քը: Լեռնական Գյուղատնտեսական ինստիտուտը, գործադրելով
յեգիպտացորենի մշակման կուտուրական յեղանակները, 1 հեկ-
տարից ստանում ե 39 ցենտներ: Ուրեմն ազգային շրջանների
տնտեսություններն ել կարող են ստանալ նույնքան բերք:

Աշխատանշերի արժեք	Հին յեղա- նակներով մշակման դեպքում	Նոր, կու- տուրական մշակման դեպքում
Ի՞նչ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ		
Վարել	8 ռուբլի	8 ռուբլի
Մինչև ցանքը 2-3 անգամ ցաքանելը .	չի յեղել	6 »
Սերմացույի և ցանքի արժեքը	6 ռուբլի	9 »
Յեգիպտացորենին խնամելը նրա աճման ընթացքում (ցաքանելն և ձեռքի քաղ- հանը հին յեղանակով մշակելու գեպ- քում)	14 ռուբլի	22 »
Վնասատուների վոչնչացումը	չի յեղել	6 »
Հավաքումը, հասկերի փշորումը և ցողուն- ները քաղելը	18 ռուբլի	24 »
Հասկերի և ցողունների տեղափոխումը .	4 »	8 »
Ընդհանուր ծախսերը (ինվենտարի վե- րանորոգում, նրա արժեքի ծածկում, հարկեր	5 »	8 »
Ծախսերի ընդհան. գումարները	55 »	91 »

Յեթե զգուշության համար վերցնենք վոչ թե 39 ցեն-
տներ, այլ միայն 36 ցենտներ, այդ գեպքում անտեսությունն
ամեն մի հեկտարից կստանա 140 ռուբլի:*) Յեթե այդ գու-

*) 36 ցենտներ հասկերը 3 ռուբ. 10-ական կոպեկի հաշվով տա-
լիս են 110 ռուբլի և 50 ցենտներ ցողունները 60-ական կոպեկով—
30 ռուբլի, ընդհանը 140 ռուբլի:

մարից հանենք ծախսերի 91 ռուբլին, ապա ամեն մի հեկտարից կստացվի 49 ռուբլի ոգուտ:

Ահա թե ինչ է տալիս յեզիպտացորենի կուլտուրական մշակումը:

Բացի դրանից, անհրաժեշտ է նաև հաշվի առնել յեզիպտացորենի կերպին նշանակալից արժեքը: Նա եժան և մննդար կեր է տալիս անասունների համար և հենց՝ դրանով ել բարենպաստ պայմաններ ե ստեղծում ազգային շրջաններում կենդանաբուծության ամենալավ զարգացման համար: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր յեզիպտացորենը լավ է վարձատրում աշխատանքը և մեծ յեկամուտ է տալիս տնտեսության:

Յեթե կոլեկտիվ տնտեսությունը, վորն ունի 200—300 հեկտար յեզիպտացորեն, գործադրե այստեղ նկարագրած մշակման բոլոր կուլտուրական յեղանակներն, ապա նա կարող է ստանալ 10,000—15,000 ռուբլի զուտ յեկամուտ:

ՄՏՔԵՐՈՒՄԴ ՊԻՆԴ ՊԱՀԵՑԵՔ ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՄԱՆ ԲՈԼՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Ամեն մի յերկրագործ պետք է իր մտքումը պինդ պահ յեզիպտացորենային բույսի առանձնատկությունները, նրա պահանջները գեպի կլիման և հողը և, այդ պահանջների համաձայն, կազմակերպի նրա մշակումը:

2. Առանձնապես անհրաժեշտ է ի նկատի ունենալ, վոր յեզիպտացորենը—

ա) Գարնանը չի կարողանում ցուրտ տանել և աճելու ժամանակ շատ արե ու տաքություն է պահանջում:

բ) Զի կարողանում տանել թաց հող, վորտեղ գետնի տակի ջուրը մոտիկ է լինում մակերեւութին և

գ) Վերջապես, նա բեղմնավորվում է խաչած կերպով (ուրեքրեստո), յերբ բեղմնավորման փոշին թռչում է մի քանի կիլոմետր տարածություն:

3. Դաշտը պետք է վարած լինի աշնանից, 15—18 սանտիմետր խորությունից վոչ պակաս: Յեթե ինչ-ինչ պատճառներով չհաջողվի աշնանը վարել, ապա վարը պիտի անել գարնանը, վորքան յարելի յե վաղ, —խոնավ ուայոններում 15—18 սանտիմետր խորությամբ, իսկ չորային ուայոններում—10—12 սանտիմետր:

4. Վաղ գարնանը դաշտը պետք է լավ ցաքանել և այնուհետև մինչև ցանքը կրկնել ցաքանելը մի մնագամ ել, կամ յերկու անգամ, նայած թե դաշտը վորքան է ծածկվում մոլախոտերով և վորքան է պինդ: Խոնավ ուայոններում կարելի յե ցանքից առաջ յերեսանց վարել, յեթե դաշտը սաստիկ ծածկված է մոլախոտերով և կամ պնդացել ե:

Յեզիպտացորենը ցանքափոխության մեջ պիտի տեղ բռնի այնպես, վորպեսզի նա միևնույն տեղում մեկ-յերկու տարուց ավելի չցանքի և վորպեսզի ամեն տարի կամ տարին ընդմեջ հերթափոխվի ուրիշ կուլտուրաների հետ: Յեզիպտացորենին կանոնավոր խնամելու դեպքում նա դաշտերը լավ է մաքրում մոլախոտերից: Այս պատճառով յեզիպտացորենից հետո պիտի ցանել այնպիսի բույսեր, վորնք իրենց զարգացման առաջին ժամանակներում վախենում են մոլախոտերից:

6. Չորային ուայոններում յեզիպտացորենի դաշտում կարելի յե կատարել խերսոնյան ցել, վորն ուժեղ չափով բարձրացնում է աշնանացման ցորենի բերքը և նրան պահպանում է սառչելուց:

7. Չորային ուայոններում յեզիպտացորենի հարմար տեսակը հանդիսանում է Այգորի-կինզը: Նախ քան նրա մշակման անցնելը, պետք է փոքրիկ հողատարածությունների վրա նախապես փորձել այդ տեսակը:

8. Խոնավ ուայոնների համար ամենալավ տեսակը գեղ ձևորեն չի սահմանված: Այս կամ այն ուայոնում կարող են հարմար լինել ամերիկական ատամնաձև տեսակները, —Ստերլինգ, Մինեզուա 23, Միննեզուա 13 և Բրունլիոնաի: Մինչև այս տեսակների ցանքին անցնելը, նրանց նույնպես պետք է անպայման փորձել:

9. Յեթե այս կամ այն ույցնի համար չճարվի ամերիկական հարմար տեսակը, այդ դեպքում պետք է ցանել տեղական սպիտակ յեգիպտացորենը։ Այս դեպքում յուրաքանչյուր տընտեսություն պետք է զբաղվի նրա բարելավմամբ, ինչպես նկարագրված է այս դրքում։

10. Ցանելու համար պետք է վաղորոք, դեռ աշնանից, ջոկել ամենալավ հասկերը և նրանց պահել կախված վիճակում ու չոր շենքում։

11. Ցանքից առաջ ջոկած հասկերը պետք է ստուգել (ծլեռ և բողբոջի ամրությունը), իսկ հետո նրանցից ջոկել վերին ու ներքին մասերը։

12. Յեգիպտացորենը պիտի ցանել վաղ, հենց վոր հողը տաքանա այնքան, վոր ապահովի սերմերի արագ ծլումը։ Վոչ մի դեպքում չի կարելի ցանքն ուշացնել։

13. Ցանքն անպայման պիտի կատարել շարքացան մեքենայով կամ վաղորոք նշաններ արած դաշտում։

14. Շարքերի և բույսերի միջատարածությունները պետք հավասար լինեն 50—60 սանտիմետրի։

15. Սերմերի հողում յեղած խորությունը պետք է լինի վոչ պակաս, քան 8—10 սանտիմետր։

16. Առաջին քաղհանը պետք է կատարել շուտով, ծիլերը լիովին յերևալու դեպքում։

17. Յերկրորդ քաղհանը կատարել հարկավոր և առաջինից 8—10 որ հետո։

18. Յերկրորդ շարքաբացման հետ միասին անպայման պիտի կատարել առաջին քաղհանը՝ 7 սանտիմետր խորությամբ և ձեռքի քաղհանը—յեգիպտացորենի բույսերի շուրջը։

19. Ամբողջ ամառվա ընթացքում անհրաժեշտ է կատարել յերկու կամ յերեք քաղհան այնպես, վորպեսզի յեգիպտացորենի դաշտը միշտ պերծ լինի մոլախոտերից և հողը փիրուն լինի։ Ամեն մի հնակայալ քաղհանը պիտի կատարել ավելի յերևանց, քան նախորդը և փրատեսզի վերջին քաղհանն ունենա վոչ ավելի, քան 2-3 սանտիմետր խորություն։

20. Յեգիպտացորենի աճման ժամանակ նրա վրա հարձակվում են շատ վասատուներ, վորոնք պակասեցնում են բերքը։ Ազգային ըրջաններում յեգիպտացորենի գլխավոր թըշնամինները հանդիսանում են թոչունները, խոմյակները, յեգիպտացորենային թիթեռն և գոլովյան։ Յեգիպտացորենի վասատունների դեմ պետք է անխնա պայքար մղեր։



ՀՀ Ազգային գրադարան



NL0287580

18661

ԳԻՒԸ Յ ԿՈՊ.

41877

ԵՐԱԾ

3 841-13 - 971